

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 2003 թ. փետրվարի 6-ի նիստի

Նախագահում էր՝ Ա. Մարգարյան	- ՀՀ վարչապետ
Մասնակցում էին՝ Մ. Թովուզյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար- նախարար
Տ. Սարգսյան	- ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
Կ. Կիրակոսյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ
Լ. Մկրտչյան	- ՀՀ կրթության և գիտության նախարար
Ա. Ավետիսյան	- ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Ըստ օրակարգի՝ «Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի 2003թ գործունեության ծրագրի,
ֆինանսական նախահաշվի, կադրային
հարցերի մասին

(Ս. Սեյրանյան, Մ. Մկրտչյան, Ա. Ավետիսյան,
Լ. Մկրտչյան, Կ. Կիրակոսյան, Տ. Սարգսյան, Մ.
Թովուզյան, Ա. Մարգարյան)

1. Հաստատել օրակարգը:
2. Հաստատել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2003թ. գործունեության
ծրագիրը դրա մեջ նախատեսված հետևյալը կետերը՝
 - ա) գիտահետազոտական մրցույթի արդյունքում ստացված աշխատանքների հիման
վրա ներկայացնել առաջարկություններ համապատասխան կառավարման
մարմիններին:
 - բ) ծրագրում նախատեսել առանձին բաժին հայագիտության թեմայով և դրա համար
ֆինանսական նախահաշվով նախատեսել ոչ պակաս 5 մլն. դրամ:
3. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2003թ. ծրագրի ֆինանսական
նախահաշվին անդրադառնալ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ
մտնելուց հետո:
4. Նկատի ունենալով, որ 2003թ. փետրվարի 6-ին լրանում է «Նորավանք»
գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնակատար

Մ.Մկրտչյանի հետ կնքած պայմանագրի ժամկետը հիմնադրամի գործադիր տնօրենի պարտականությունները ս/թ փետրվարի 6-ից վեց ամիս ժամկետով դնել Գ.Հարությունյանի վրա՝ կնքելով համապատասխան աշխատանքային պայմանագիր:

5. Մ.Մկրտչյանի հետ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնակատարի աշխատանքային պայմանագիրը երկարաձգել մինչև ս/թ փետրվարի 6-ը:
6. Ս/թ փետրվարի 6-ից Մ.Մկրտչյանին նշանակել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ 180.000 դրամ ամսեկան աշխատավարձով՝ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալի հաստիքները մեկ միավորից սահմանելով երկու միավոր:
7. Լիազորել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մ.Թովուզյանին կնքելու՝
 - ա) Մ.Մկրտչյանի հետ աշխատանքային պայմանագիրը երկարաձգելու մասին լրացուցիչ համաձայնագիր,
 - բ) Գ.Հարությունյանի հետ համապատասխան աշխատանքային պայմանագիր:

«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ,
նախագահող

Ա. Մարգարյան

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի առաջիկա գործունեության ծրագիրը և իրականացվող միջոցառումները

I. Գիտահետազոտական ուսումնասիրությունների կազմակերպում

1. «Ազգային անվտանգության հիմնադրույթներ» և «Հայոց պետականությունը 21-րդ դարում. հիմնախնդիրները և զարգացման առաջնահերթությունները» թեմաներով մրցույթների անցկացման արդյունքում ստացված աշխատանքների հրատարակում պրակներով - հունվար-մարտ
2. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդեսի 2 համարների թողարկում (ներառելու է մրցութային աշխատանքները և դրանց վերաբերյալ վերլուծական հոդվածները) – մարտ-հունիս
3. Մրցույթի անցկացման համար նոր գիտահետազոտական թեմաների մշակում – մայիս
4. Երկու փուլով մրցույթի անցկացում – հունիս-հուլիս
5. Մրցույթի արդյունքների ամփոփում, հաղթողների հետ պայմանագրի կնքում – օգոստոս
6. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կողմից անցկացված մրցույթի թեմայով տարեկան ամփոփիչ կոնֆերանսի կազմակերպում և անցկացում – նոյեմբեր

II. Համահայկական համալսարանի կայացման միջոցառումներ

1. ՀՀ նախարարությունների հետ համատեղ ռազմավարական ծրագրերի քննարկում. ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ «Կրթական համակարգի հեռանկարային զարգացման ուղղությունները» թեմայով քննարկման կազմակերպում և անցկացում
2. Թեմատիկ պրոբլեմային կոնֆերանսների կազմակերպում և անցկացում Երևանի բուհերում
3. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում հրավիրված մասնագետների կողմից թեմատիկ դասախոսությունների և քննարկումների կազմակերպում և անցկացում

III. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների և աշխատակազմի համատեղ սեմինարներ (նվազագույնը` ամիսը մեկ անգամ)

Հիմնական ուղղությունները`

1. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կայացման պրոբլեմները
2. Անկախ փորձագիտական խմբի ձևավորման պրոբլեմները
3. Ընթացիկ իրադրության վերլուծություն և հետագա անելիքների ճշգրտում

IV. Շինարարական բարեկարգման աշխատանքներ

1. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Գարեգին Նժդեհի, 23 հասցեում գտնվող Երևանյան գրասենյակի վերանորոգման նպատակով իրականացվելիք առաջնահերթ միջոցառումների իրականացում.

ա) առաջին հարկի վերանորոգում,

բ) նկուղի, շրջակա հարող տարածքի և շենք տանող ճանապարհի բարեկարգում:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստի

06.02.2003թ.
Երևան

Ք.

1. Նիստի օրակարգի քննարկում և հաստատում:
2. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի առաջիկա գործունեության ծրագրի քննարկում և հաստատում:
3. Ծրագրի իրականացման ֆինանսական նախահաշվի քննարկում և հաստատում:
4. Կադրային հարցեր:
5. Այլ հարցեր: